

ՀԵՌԱՅԱՐ (ԴԻՍԱԼՑԻՈՆ) ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Ներկայումս բազմաթիվ երկրների բանկային համակարգերում անցում է կատարվում հաճախորդների սպասարկման ավանդական ձևից հեռահար (դիստանցիոն) բանկային սպասարկման:

Հեռահար բանկային սպասարկումն արտահայտում է համալիր իրականացվող այն նորամուծությունը, երբ հաճախորդը բանկի հետ շփվում է հեռահար փոխազդեցության միջոցով:

Հեռահար բանկային սպասարկումը ենթադրում է գործարքի կնքում թվային տեսքով, կողմերի ֆիզիկական շփման բացակայության պայմաններում: Բանկի և հաճախորդի միջև տվյալների փոխանակությունը տեղի է ունենում հեռահաղորդակցության միջոցներով, այսինքն՝ բանկը հաճախորդի միջոցների վերաբերյալ գործարքներն իրականացնում է հաճախորդի կողմից բանկին տարբեր կապուղիներով /օրինակ՝ հեռախոս, ինտերնետ/ հաղորդվող հեռահար տնօրինման հիման վրա:

Հեռահար ներկայացվող ֆինանսական ծառայությունների շուկայում բանկերի մասնակցության ժամանակակից ձևերի բազմությունը կարելի է ներկայացնել երեք մոդելներով.

1. մասնակցություն տեղեկատվական և մարքեթինգային նպատակներով: Այն իրականացվում է INTERNET ցանցում առևտրային բանկերի վեբ-կայքերի ստեղծմամբ (այս դեպքում կայքի առկայությունը ցանցում չի ենթադրում բանկային հեռահար ծառայություն, այլ նպատակ ունի INTERNET-ային գովազդի միջոցով ավանդներ ներգրավել):
2. Ավանդական բանկային ծառայությունների տրամադրում զանազան ուղիներով (բանկային հաշվի հեռակառավարում՝ ներառյալ հաշվի ստուգում, վճարում, միջոցների փոխանցում, ինչպես նաև հաճախորդին տեղեկատվության և հարակից ծառայությունների տրամադրում):
3. Համալիր հեռահար սպասարկման տրամադրում: Այն իրականացվում է տարբեր ֆինանսական գործիքների ինտեգրման (օրինակ՝ վճարման քարտեր, հաշվի դեկավարում) և մուտքային ուղիների միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ տեղի է ունենում տեղեկատվական մարքեթինգային նպատակներով հեռահար բանկային ծառայությունների և անուղղակի հեռահար սպասարկման միաձուլում:

Հեռահար բանկային սպասարկման համակարգը դառնում է բանկային սպասարկման գործընթացների վերակազմակերպման ժամանակակից ձևերից մեկը: Մակայն հեռահար բանկային ծառայությունների ողջ համալիրը դեռևս հեռու է ամբողջական լինելուց:

Հեռահար բանկային սպասարկման կազմակերպական տեխնոլոգիան ներքին կարգավորման և հեռահար սպասարկման տարբեր ձևերի ներդրման, համաձայնեցման միջոցառումների ամբողջություն է: Այն իրականացվում է հեռահար բանկային սպասարկման համակարգի այնպիսի տեխնոլոգիաների համակցությամբ, ինչպիսիք են՝ արտաքին ռեսուրսների ներգրավումը, վիրտուալ միջավայրի ստեղծումը և գեոմարքեթինգի սկզբունքներով ձևավորված սպասարկման տեխնոլոգիան: Դրանց մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում բանկային ծառայությունների տրամադրման առանձնահատկություններով:

Ֆինանսական ծառայությունների շուկայում հաճախորդների սպասարկման գործընթացների հետագա կատարելագործման ընթացքում, անկախ ընտրված հեռահար բանկային

սպասարկման կազմակերպման տեխնոլոգիայից, մուտքի տարբեր ուղիների մեծ չափերով ինտեգրումը բանկի համար կապահովի բարձր մրցակցային դիրքեր:

ՀՀ առևտրային բանկերում ներդրվող բանկային նորամուծություններն ապահովում են բանկի հետագա առաջընթացը ժամանակակից ֆինանսական ծառայությունների կազմակերպման մեջ: Դրանց ռազմավարական ծրագրերը վերաբերում են հաճախորդների կայուն և բազմատեսակ (դիվեսիֆիկացված) բազայի ձևավորմանը, ընդլայնմանը և սպասարկման բարձր որակի ապահովմանը:

Առևտրային բանկերի զարգացման հիմք են առավել մեծ թվով հաճախորդների ներգրավումը, այդ թվում նաև գնային մրցակցության մեթոդներով, վարկային քաղաքականության կատարելագործմամբ, բանկային ենթակառուցվածքի զարգացմամբ և սպասարկման գործընթացների օպտիմալացմամբ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա: Վերջիններս ապահովում են համակողմանի, լայն մասնաճյուղային ցանցով բանկի գործառնական գործընթացների վերակառուցումը, թույլ են տալիս ջանքերը կենտրոնացնել գործունեության առավել կարևոր ուղղությունների վրա, կանոնակարգել ֆինանսական և տեղեկատվական հոսքերը և այդպիսով իրականացնել բիզնեսի զարգացման միասնական քաղաքականություն:

Հաճախորդների հեռահար սպասարկման համար օգտագործվող բանկային տեխնոլոգիաներն իրացվում են հետևյալ սկզբունքներով.

- ուղղվածություն դեպի այն հաճախորդները, որոնք ամենաբարձր պահանջներն են ներկայացնում բանկային սպասարկմանը,
- բանկի կողմից հաճախորդների և գործընկերների առջև իր պարտականությունների անվերապահ կատարումը,
- մասնագիտացումը շուկայի տարբեր բնագավառներում ամենաբարդ և պատասխանատու գործարքների կազմակերպման և տեխնոլոգիական առավելությունների օգտագործման մեջ,
- ըստ տարածքների բաշխված բաժանմունքների և մասնաճյուղերի միավորումը տեխնոլոգիական հիմքի վրա, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալու անհրաժեշտ ծառայություններ՝ անկախ նրա գտնվելու վայրից:


Այս սկզբունքների իրականացումը ենթադրում է տեխնոլոգիական լուծումները կարգաբերել և հարմարեցնել բանկային գործունեության պայմաններին, հաճախորդներին առաջարկել բարձր որակի ծառայություններ, ընդլայնել բանկի ներկայությունը ֆինանսական ծառայությունների շուկայում, ինչպես նաև, անկախ տարածքային տեղաբաշխումից և հաճախորդների քանակից, ապահովել որակի միասնական չափանիշ: Հեռահար բանկային սպասարկում ապահովող ավտոմատ բանկային համակարգի առավելությունների թվին կարելի է դասել բանկի բոլոր բաժանմունքների և մասնաճյուղերի հաշիվների և հաճախորդների միասնական բազայի վարման հնարավորությունը և բանկային գործարքների ներդրված համակարգը, որը հնարավորություն է տալիս հաճախորդների հետ աշխատել ինտերակտիվ ռեժիմում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը կապված է բանկերի՝ շուկայում ներկա գտնվելու ընդհանուր ռազմավարության հետ: Չնայած ՀՀ-ում հեռահաղորդակցական և մալուխային ցանցերը դեռևս բարձրորակ կապ չեն ապահովում, հեռահար սպասարկում ներդրած բանկը միասնական ծրագրաապարատային համալիրի միջոցով, Ինտերնետ ցանցի հիման վրա ապահովում է օպերատիվ համագործակցություն կազմակերպական կառուցվածքում, ինչի արդյունքում տվյալների բազայի մուտքի հնարավորություն ունեցող աշխատանքային տեղերի քանակը ավելանում է: Ներբանկային էլեկտրոնային փոստի օգտագործումն ապահովում է փաստաթղթերի առաքման ծախսերի նվազում, առաքման օպերատիվություն և տեղեկությունների պաշտպանվածության բարձր մակարդակ:

Վճարային համակարգի ստեղծման և զարգացման հիմնական նպատակն է՝ ապահովել դրամական շրջանառության կատարելագործումը երկրի ողջ տարածքում՝ էլեկտրոնային անկանխիկ վճարման համակարգի միջոցով:

Հեռահար բանկային սպասարկման զարգացում ասելով հասկանում ենք դրա տարածման, տրամադրվող ծառայությունների քանակական և որակական բնութագրերի մասշտաբների ուղղորդված, կառուցվածքային, օրինաչափ փոփոխությունները, որոնք սլայմանավորված են ներքոհիշյալ գծապատկերում բերված գործոններով:

Հեռահար բանկային սպասարկման վրա ազդող գործոնների համախումբը բաժանված է երկու տարբեր խմբերի՝ նպաստող և խոչընդոտող, որոնց վերաբերյալ կատարենք որոշ մեկնաբանություններ:



Գծապատկեր 1. Հեռահար բանկային սպասարկման վրա ազդող գործոնները ֆինանսավարկային համակարգում:

Հեռահար բանկային սպասարկման արագ զարգացմանը նպաստող գլխավոր գործոններից է մրցակցությունը, որը բանկերին ուղղորդում է դեպի սպասարկման նոր ձևերի բացահայտումը և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, որը թույլ կտա բավարարել ընդգրկված հաճախորդների պահանջները և ներգրավել նոր հաճախորդներ:

Ձգտելով լավագույնի հասցնել հաճախորդների բանկային սպասարկումը, ընդլայնել ծառայությունների տրամադրման շրջանակները և մրցակցության ազդեցության ներքո իջեցնել դրանց ինքնարժեքը՝ բանկերը ներդնում են դրանց մատուցման նոր, հեռահար եղանակներ:

Հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներով իրականացվող հեռահար բանկային գործունեության տեխնոլոգիան հնարավորություն է տալիս սպասարկել աշխարհի ցանկացած վայրում գտնվող անընդհատ տեղաշարժվող հաճախորդներին:

Հեռահաղորդակցության միջոցների զարգացումը և տարածումը ՀՀ-ում նույնպես տեխնիկապես հնարավոր դարձրին հեռահար սպասարկումը:

Թվային տեխնոլոգիաների հաջողությունները հնարավորություն տվեցին ստեղծել էլեկտրոնային թվային ստորագրությունը և դրա կիրառման ուղիները, որոնց շնորհիվ տեղեկատվության հաղորդումը և գործարքների կնքումը դարձան տեխնիկապես անվտանգ: Ժամանակի ընթացքում տեղեկատվական հասարակության մեջ փոփոխվում է հանրային հոգեբանությունը, արագանում է կյանքի տեմպը, ժամանակը դառնում է «թանկարժեք ապրանք», համապատասխանորեն փոփոխվում են հաճախորդների պահանջները բանկային սպասարկման նկատմամբ, այսինքն՝ այն պետք է հնարավորինս քիչ ժամանակ զբաղեցնի և լինի հարմարավետ:

Գծապատկերում բերված գործոնների հաջորդ խմբում՝ հեռահար բանկային սպասարկման զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում, պետք է նշել վճարային ենթակառուցվածքի անբավարար զարգացածությունը: Պլաստիկ քարտերը հետզհետե դառնում են ժամանակակից վճարային համակարգի էական բաղադրատարրերը, որոնք վճարման և կանխիկ փողի ստացման հարմարավետ ձև են: Հեռահար բանկային ծառայությունների շուկայի վճարային ենթակառուցվածքների զարգացման մեջ պետք է նշել սմարտ-քարտերը (smart-cards), որոնք բնութագրվում են ավելի լավ պաշտպանվածությամբ և ֆունկցիոնալ հնարավորություններով, քան մագնիսային շերտով քարտերը, որոնց օգտագործումը սահմանափակվում է հեռախոսային կապի միջոցների ոչ այնքան բարձր որակով:

Թեև «սմարտ-քարտերը» գրեթե երկու անգամ քանկ են մագնիսային շերտով քարտերից, այնուամենայնիվ ամբողջական համակարգի ապահովման ծախսերը կարող են էականորեն քիչ լինել: Սմարտ-քարտի գլոբալ մեծածավալ տարածումը հնարավոր է միայն միացյալ ստանդարտի մշակման դեպքում: Այժմ համատեղ աշխատանք է տարվում Mastercard, VISA, AMEX համակարգի կողմից միջազգային չիպային ստանդարտի, միկրոպրոցեսորային քարտերին ներկայացվող ընդհանուր պահանջների և էլեկտրոնային տեքնիկաների հետ նրանց փոխազդեցությանը ներկայացվող ընդհանուր պահանջների մշակման ուղղությամբ: Այդ պատճառով վճարային ենթակառուցվածքի զարգացման ծրագրի ամբողջական իրականացումը որոշ ժամանակ կպահանջի:

Ներդրվող նախագծերի ռիսկայնության նվազեցման, դրանց իրականացման խթանման համար ԿԲ-ն պետք է նորմերի մի ամբողջություն մշակի՝ առևտրային բանկերի հաճախորդների սպասարկման նորամուծական ձևերին անցումը հեշտացնելու համար: Պետական աջակցությունը էլեկտրոնային բանկային ծառայությունների շուկայում հնարավորություն կտա բանկերին մեծացնել իրենց մրցակցային հնարավորությունները:

Հեռահար բանկային սպասարկման նախագծերի ներդրման ուղղությամբ բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջը կարելի է բավարարել՝ կադրերին վերապատրաստելով տեղեկատվական բանկային գործառնությունների ոլորտում արևմտյան ուսումնասիրությունների հիման վրա, որոնք առավելապես վերաբերում են հեռահար բանկային սպա-

սարկման ներդրումն ապահովող սարքավորումների և ծրագրային միջոցների ամբողջությամբ: Մեծ ուշադրություն պետք է դարձնել արտասահմանյան մասնագետների կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցների տեղայնացմանը՝ հաշվի առնելով հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները:

Հեռահար բանկային սպասարկման ընդլայնմանը լուրջ խոչընդոտ է այսպես կոչված «հաճախորդների մտավախության» գործոնը: Բանկերի ապահովության և ֆինանսական տեղեկատվության անվտանգության առումով զգուշությունները պետք է հիմնված լինեն նախ և առաջ բանկային գործունեության թափանցիկության և հաճախորդների իրավունքների պաշտպանության օգտագործվող մեխանիզմների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման վրա:

Հեռահար բանկային սպասարկման իրականացման ժամանակ մոցիալական նախընտրելիության նկատմամբ հաճախորդների մտավախության վերացումը (սոցիալական նախընտրելիություն ասելով նկատի է առնվում բանկի հետ հարաբերությունների անձնականացում, անձնական բնույթի տեղեկատվության օգտագործում, օրինակ՝ հաճախորդներից որևէ մեկին նախապատվություն տալը՝ մարքեթինգային նպատակներով) ժամանակի խնդիր է և կախված է ԳՏԱ-ի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ազդեցությամբ հասարակական մտածելակերպի փոփոխությունից:

Իրավական տեսանկյունից բանկային գործառնության հեռահար իրականացումը էլեկտրոնային գործարքի մասնավոր դեպք է, քանի որ այս դեպքում ծառայությունը (գործառնության իրականացումը) մատուցվում է առանց որևէ փաստաթղթի թղթային կրիչի վրա ձևակերպելու: Այս տեսանկյունից հեռահար բանկային համակարգի իրավական ապահովումը կապված է էլեկտրոնային գործարքների և ամբողջ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրավական ապահովման հետ: Ընդհանրապես «էլեկտրոնային գործարք» հասկացությունը իրավական պրակտիկայում համեմատաբար նոր է ի հայտ եկել, այդ պատճառով էլեկտրոնային գործարքների իրավական ապահովման մեջ կան շատ անհարթություններ:

Պրակտիկայում էլեկտրոնային գործարքների իրականացման հիմքում ընկած է կողմերի համաձայնությունը՝ կասկածի տակ չղնել գործարքի օրինականությունն ու իրական լինելը միայն այն պատճառով, որ այն իրականացվել է էլեկտրոնային ճանապարհով: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում գրված է՝ ՀՀ ԿԲ-ը և նրա լիցենզավորած անձինք կիրառում են էլեկտրոնային փաստաթղթերը և էլեկտրոնային թվային ստորագրությունները՝ ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով¹:

Այս սկզբունքը դեռ չի արմատավորվել, այդ պատճառով կողմերը չեն կարող վստահ լինել, որ երկկողմ համաձայնության բոլոր դրույթները կունենան հավասար իրավական ուժ դատաքննության դեպքում:

Հեռահաղորդակցման ստեղծված ենթակառուցվածքը ընդհանուր օգտագործման կապի ցանցերի միջոցով ապահովում է փոխադարձ կապը բաժանմունքների, բանկոմատների, առևտրի և սպասարկման ձեռնարկությունների հաշվարկային տերմինալների և կենտրոնական հաշվողական կենտրոնի միջև:

Ծրագրաապարատային համալիրը, որը բանկի վիրտուալ ցանցը վերածում է Ի-նտերնետի, ընդգրկում է տվյալների նախապատրաստման, ծածկագրման, հաղորդման, փորձարկման և մշակման միջոցները:

Բանկի տեխնիկական համակարգում հեռահար սպասարկման նոր ծրագրահամակարգային միջոցների ներդրումը կարող է թույլ տալ բանկերին իրականացնել հեռահար բանկային

¹ ՀՀ օրենքը «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ընդունված 2004թ. դեկտեմբերի 14, հոդված 11:

սպասարկման տարբեր ծրագրեր, ինչպես օրինակ՝ «Բանկ-հաճախորդ», «Տնային բանկ», «Էլեկտրոնային առևտուր»¹:

«Բանկ-հաճախորդ» ծրագիրը իրավաբանական անձ - հաճախորդներին ուղղված էլեկտրոնային վճարման մոդուլ է, որը հնարավորություն է տալիս կատարել անկանխիկ վճարումների շուրջօրյա սպասարկում:

«Բանկ-հաճախորդ» համակարգի հիմնական բնորոշ առանձնահատկություններն են՝

- հաճախորդների շուրջօրյա սպասարկման հնարավորություն,
- գործարքների իրականացում իրական ժամանակի կտրվածքով,
- համակարգից օգտվողների մուտքի իրավունքների և ֆունկցիոնալ պարտականությունների սահմանազատում,
- վճարման փաստաթղթերի ներմուծում հաճախորդի հաշվապահական հաշվառման ծրագրերից,
- գործարքների ձևերի լրացման գործընթացի ավտոմատացում՝ օգտագործելով ձևանմուշներ,
- վճարման փաստաթղթերի իրավագործման ապահովում էլեկտրոնային ստորագրությունների միջոցով և կապի բաց ուղիներով հաղորդվող տեղեկությունների պաշտպանություն ծածկագրման միջոցով,
- ծրագրից օգտվողների գործողությունների ավտոմատ արձանագրում,
- բանկի սերվերի կամ Ինտերնետի հետ ուղիղ մոդեմային կապի օգտագործում՝ որպես փոխադրամիջոց,
- գաղտնիություն, պաշտպանություն անթույլատրելի մուտքից:

«Տնային բանկ» ծրագրի հիմնական նպատակն է՝ բանկային գրասենյակի ծառայությունների տրամադրում երկրագնդի ցանկացած կետում, որտեղ սպառողը մուտք ունի դեպի Ինտերնետ՝ որպես այդ ծառայությունների առաքման միջոց: Ծրագիրն ուղղված է սպառողների լայն շրջանին:

«Տնային բանկ» ծրագրի շրջանակներում ներդրված են՝

• «Արժեզրեզման վճարումների համակարգ»՝ բանկի հաճախորդների և տարբեր պլաստիկ քարտեր ունեցողների և առանձին ընկերությունների արժեզրեզման ծառայությունների վճարման համար:

• «Բանկի միջոցների կառավարման համակարգ»։ Ուստիստեղծված է բանկի հաճախորդների սպասարկման համար և թույլ է տալիս ունենալ օպերատիվ մուտք իրենց բանկային հաշիվներին (օրինակ՝ բացել հաշիվ, միջոցները տեղադրել դեպոզիտի վրա, գնել բանկի մուրհակ), գնել և վաճառել արտարժույթ, աշխատել ընկերությունների բաժնետոմսերի և արժեթղթերի շուկայում, համարել պլաստիկ քարտերի հաշիվները: «Բանկի միջոցների կառավարման համակարգին» միանալու համար անհրաժեշտ է բացել հաշիվ համապատասխան բանկում, միանալ Ինտերնետ ցանցին և բանկից ստանալ հատուկ ծրագրային ապահովում: Համակարգը թույլ է տալիս գործնականորեն կատարել այն բոլոր գործարքները, որոնք մատչելի են սովորական բանկում:

• «Պլաստիկ քարտերի իրավագործման համակարգ»։ Որպես մշակումը կապված է կապի առանձնացված կապուղիների համար ծախսերի նվազեցման անհրաժեշտության հետ: Համակարգը հիմնված է Ինտերնետ ցանցի օգտագործմամբ պլաստիկ քարտերի և ձայնային իրավագործման վրա: Ձայնային իրավագործման զանգը գնում է բանկի մոտակա մասնաճյուղի օպերա-

¹ Интернет –банкинг - проблемы и перспективы (банк «МЕНАТЕП- СПб») // Интернет и инвестиции. 22.12.2002.(www.tos.ru/rf).

տորին, որի աշխատանքային տեղը անմիջականորեն կապված է պլաստիկ քարտերի մշակման կառավարման կենտրոնի հետ՝ Ինտերնետ ցանցի միջոցով:

• «Ինտերնետ-տրեյդինգ (առևտուր) համակարգ»։ թույլ է տալիս բանկի հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց ունենալ ամբողջական տեղեկություններ և Ինտերնետի միջոցով արժեթղթերով գործարքներ կատարել: Հաճախորդը հնարավորություն ունի կառավարել իր արժեթղթերի պորտֆելը իրական ժամանակի ռեժիմում: Տվյալ համակարգը նախատեսված է այն հաճախորդների համար, որոնք մեծ շահույթ ստանալու նպատակով պատրաստ են ռիսկի դիմել:

«Էլեկտրոնային առևտուր» ծրագիրը միավորում է էլեկտրոնային առևտրի երկու բնագավառ՝ business-to-business և business-to-customer: Առաջին դեպքում Ինտերնետում գործարքը կատարում են երկու իրավաբանական անձինք, երկրորդ դեպքում տեղի է ունենում մանրածախ Ինտերնետ-առևտուր:

Ինտերնետ տեխնոլոգիաների հետագա ներդրումը դառնում է բանկային սպասարկման գործընթացների հետագա զարգացման ռազմավարական ռեսուրս և հնարավորություն է տալիս կազմակերպել ու կարգավորել դրանց նոր ձևերի իրականացումը:

Հեռահար բանկային սպասարկման նորամուծական ձևերի ներդրման միջազգային փորձը գնահատելով՝ պետք է նշել, որ հաճախորդների սպասարկման ավանդական ձևերից հրաժարումը իրականացվում է էվոլյուցիոն ճանապարհով. առևտրային բանկերը, տիրապետելով արդեն ճյուղավորված ցանցի, նտիպված են զանազան սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությամբ աստիճանաբար փոխել իրենց մասնաճյուղերի դերը և գործառույթները:

Առևտրային բանկերը ներդնելով՝ բանկային սպասարկման նորամուծական ձևերը կարող են անցում կատարել հաճախորդների սպասարկման ժամանակակից եղանակներին:

Բանկային սպասարկման նորամուծական ձևերի իրականացման համաշխարհային փորձի և էլեկտրոնային բանկային ծառայությունների շուկայի կայացման վերլուծության հիման վրա կարելի է կարգավորման ժամանակակից հայեցակարգերի միջոցով հեռահար բանկային գործունեության համակարգի ներդրման վրա հիմնված բազմաօղի հեռահար սպասարկումը համարել ֆինանսավարկային կազմակերպությունների նոր բիզնես-գործունեությունների զարգացման հեռանկարային ուղղություն:

ԱՐՄԻՆԵ ԶԱՆԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԱՆԿԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԱՑԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Համաշխարհային փորձը վկայում է, որ արտադրության կազմակերպման բաժնետիրական ձևն ունի որոշակի առավելություններ կազմակերպատնտեսական այլ ձևերի համեմատ, քանի որ հնարավորություն է ընձեռում ներգրավել բնակչության գրեթե բոլոր խավերի՝ ինքնուրույն արտադրական նշանակություն չունեցող փոքրածավալ խնայողությունները և միաժամանակ կառուցված է ընդհանուր գործի վերջնական հաջողության համար յուրաքանչյուր բաժնետիրոջ տնտեսական շահագրգռվածության ու պատասխանատվության սկզբունքների հիման վրա: